

Փոխմարզպետներ Լ. Մուրադյանը և Դ. Մամսոնյանը մասնակցեցին Սարդարապատի երկու փողոցների անվանակոչմանը

27.05.2014

Սարդարապատի հուշահամալիրում մայիսի 27-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության հռչակման օրվան ընդառաջ տեղի ունեցավ փողոցների անվանակոչման արարողությունը: Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան տանող փողոցներն այսուհետև կկոչվեն 1918թ. Սարդարապատի հերոսամարտի մասնակից զորավարների՝ Մովսես Սիլիկյանի և Դանիել Բեկ-Փիրումյանի անուններով:

Անվանակոչման արարողությանը ներկա էին ՀՀ պաշտպանության փոխնախարար Արա Նազարյանը, Արմավիրի մարզպետի տեղակալներ Լարիսա Մուրադյանը, Դավիթ Մամսոնյանը, մեծ թվով պաշտոնատար անձինք և հյուրեր:

Սարդարապատի ճակատամարտում երևանյան զորախմբի հրամանատար, ռուսական բանակի գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանի անունով կոչվեց Արաքս գյուղի Սեդրակ Գրիգորյանի անվան փողոցը, որը տանում է դեպի Սարդարապատի հուշահամալիր:

Հուշահամալիրի հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան տանող փողոցն անվանակոչվեց Սարդարապատի զորաջոկատի ընդհանուր հրամանատար, ռազմական գործիչ Դանիել Բեկ-Փիրումյանի անվամբ:

Նշենք, որ 1918թ. մայիսի 21-27-ին հայկական կանոնավոր զորամասերի, աշխարհագորի և Արեւելյան Հայաստան ներխուժած թուրքական զորաբանակի միջև Սարդարապատ կայարանի շրջակայքում տեղի ունեցած ճակատամարտում հայկական կողմի տարած հաղթանակի շնորհիվ Արեւելյան Հայաստանի զգալի մասը փրկվեց թուրքական զավթումից, և հնարավորություն ստեղծվեց հայկական պետականության վերականգման համար: 1918թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախ հանրապետությունը: